ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՐՈՇ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ
НЕКОТОРЫЕ МЕТОДИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ОЦЕНКЕ УРОВНЯ КОНСТИТУЦИОНАЛИЗМА
SOME METHODICAL APPROACHES TO THE EVALUATION OF CONSTITUTIONALISM

Սարգսյան Հ.Լ., Գևորգյան Ռ.Ա., Մխիթարյան Ժ.Ս.

Սահմանադրությունը ծույլ մարդու մը կը նմանի, որ եթե ձեռքեն չբռնես, չքալեր, նստած տեղը կը մնա, օր քան զօր կը տկարանա և կը մեռնի: Սահմանադրությունը ի՞նչ կրնա ընել ինք իր գլխուն, ոտք չունի, որ քալե, երեսփոխանները պէտք է զանիկա քալեցնեն, անոնց ալ մեծ մասը տարին անգամ մը միայն ժողովքին ներկա կը գտնվին [1, էջ 465]:

Հակոբ Պարոնյան

Երկրի սահմանադրականացման գործընթացի առավել ինտենսիվ իրագործումն անհրաժեշտ պայմաններ կստեղծի հասարակության սոցիալական համերաշխության իրավական երաշխիքների ապահովման, երկարատև կայուն տնտեսական զարգացման և այլ անվտանգային ու ռազմավարական խնդիրների լուծման համար:

Իր հերթին, սահմանադրականացման գործընթացը պետք է սկզբնավորվի սահմանադրականության մակարդակի գնահատման (ախտորոշման, չափման, մշտադիտարկման) և վերջնարդյունքում՝ դրա կառավարմանն ուղղված համալուծ հիմնախնդիրների լուծումների վերաբերյալ գիտամեթոդական մոտեցումների մշակմամբ:

Սահմանադրականության գնահատման առաջարկվող մոտեցումներից է դրա իրականացումն իրավական պետության, ժողովրդավարական և սոցիալ-տնտեսական ցուցանիշների համախմբի միջոցով [2, էջ 90-92]: Այս երեք հենասյուներն ընդունվել են, որպես սահմանադրականության գնահատման ցուցչակազմի ձևավորման հիմք: Յուրաքանչյուրի գծով ***պայմանականորեն*** դիտարկվել են հետևյալ ցուցանիշները.

<u>Հենասյուն 1</u>. Իրավական պետության՝

Ա. Իրավունքի գերակայություն

Բ. Կոռուպցիա

Գ. Սեփականության իրավունք

<u>Հենասյուն 2</u>. Ժողովրդավարության՝

Դ. Ընտրական գործընթաց

Ե. Արտահայտման և համոզմունքների ազատություն

Զ. Քաղաքացիական հասարակության մասնակցություն

<u>Հենասյուն 3</u>. Սոցիալ-տնտեսական՝

Է. Մարդկային զարգացման մակարդակ (մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի, բնակչության կրթական և առողջապահական մակարդակների ինտեգրալ ցուցանիշ է)

Ը. Ջինիի գործակից (դիտարկվել է 100-ից հանած արժեքը)

Ցուցչակազմի պայմանականությունը նրանում է, որ յուրաքանչյուր երկրի սահմանադրություն կարող է պարունակել քաղաքական-քաղաքացիական, սոցիալ-տնտեսական իրավունքների, իշխանության թևերի տարանջատման ու գործունեության հարյուրավոր նորմեր, դրույթներ: Յուրաքանչյուր դեպքում, որոշակի նորմերի առանձնացումն իրականացվում է կոնկրետ նպատակներով, հստակ չափանիշների նախանշումով: Ցուցիչների վերաբերյալ տվյալները ձեռք են բերվել Ֆրիդոմհաուզի, Համաշխարհային բանկի, Թրանսփարենսի ինթերնեյշնլի և ՄԱԿ-ի Մարդկային զարգացման համաթվի տվյալների շտեմարաններից, 2015 թ. համար (իսկ բացակայության դեպքում հասանելի ամենաթարմ ժամանակահատվածի) և ներկայացված են աղյ. 1-ում:

Աղյուսակ 1. Սահմանադրականության գնահատման տվյալների հենքը

	Հենասյուն 1			Հենասյուն 2			Հենասյուն 3	
	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը
Ալբանիա	9	33	35	8	13	6	73.3	64.7
Հայաստան	6	37	20	5	9	5	73.3	68.5
Ադրբեջան	2	29	20	1	3	3	75.1	66.3
Բելառուս	2	31	20	0	3	2	79.8	73.99

Բոսնիա և Հերցեգովինա	8	39	20	8	10	5	73.3	67
Բուլղարիա	10	43	30	11	14	8	78.2	64
Խորվաթիա	11	48	35	12	14	7	81.8	68
Չեխիա	14	51	75	12	16	8	87	73.9
Էստոնիա	14	69	90	12	16	9	86.1	67.1
Վրաստան	8	52	40	9	11	6	75.4	60
Հունգարիա	10	54	45	9	13	6	82.8	69.5
Ղազախստան	4	29	30	2	4	2	78.8	73.7
Ղրղզստան	4	27	20	6	9	7	65.5	72.6
Լատվիա	12	55	50	12	15	6	81.9	64.5
Լիտվա	13	58	65	12	16	9	83.9	64.9
Մակեդոնիա	7	45	35	6	10	6	74.7	56.4
Մոլդովա	7	35	40	10	11	8	69.3	71.5
Չեռնոգորիա	10	42	40	9	12	7	80.2	66.8
Լեհաստան	13	61	65	12	16	8	84.3	67.6
Ռումինիա	12	43	35	11	14	7	79.3	72.7
Ռուսաստան	2	27	20	1	3	3	79.8	58.4
Սերբիա	10	41	50	10	14	7	77.1	61.3
Սլովակիա	12	50	50	12	15	9	84.4	73.9
Սլովենիա	14	58	60	12	14	8	88	74.4
Տաջիկստան	3	23	20	1	4	4	62.4	69.2
Թուրքմենստան	0	17	5	0	1	1	68.8	75.5
Ուկրաինա	6	26	25	9	11	4	74.7	75.5
Ուզբեկստան	0	18	20	0	0	3	67.5	64.73

Սահմանադրականության կայունության ցուցանիշը անցումային 28 տնտեսությունների համար, Ֆրիդոմհաուզի կողմից հրապարակվող տվյալների հիման վրա հաշվարկվել է Գ.Հարությունյանի աշխատանքում [3] նկարագրված մեթոդով:

Գծապատկեր 1. Սահմանադրականության կայունության ցուցանիշի դինամիկան 2009-2015 թթ.



Ցուցանիշի դինամիկան ցույց է տալիս, որ 2009-2015թ. Հայաստանը գտնվում է այն երկրների մեջ, որոնց սահմանադրականության կայունության ցուցանիշը դիտարկված սանդղակում մոտ է զրոյի: Ինչպես երևում է գծ. 1-ից, այդ երկրները կարելի է բնութագրել, որպես այս ցուցանիշով որոշվող միջին մակարդակ ունեցող երկրներ: Կարելի է նկատել նաև, որ 2015թ սահմանադրականության կայունության ցուցանիշի տարբերությունը բարձր և ցածր մակարդակ ունեցող երկրների միջև մեծացել է բարձր մակարդակ ունեցող երկրների առաջանցիկ զարգացման հաշվին:

Սահմանադրականության գնահատումը մեր կողմից իրականացվել է քլաստերային վերլուծության և դիսկրետ մոդելավորման մեթոդաբանական մոտեցումների զուգորդմամբ: Գնահատման ընթացքի ամփոփ պատկերը ներկայացվում է գծ. 2-ում [4, 5, էջ 111-127, 6, էջ 36-51, 7, c. 33-42, 8, էջ 437-446]:

Գծապատկեր 2. Սահմանադրականության գնահատման սխեմատիկ պատկերը



Քլաստերային վերլուծությունը բազմաչափ վիճակագրական վերլուծության մեթոդ է, որը թույլ է տալիս դասակարգել և խմբավորել մեծ քանակությամբ համասեռ օբյեկտներն ավելի ցածր չափողականությամբ խմբերի: Լայն տարածում ունեն քլաստերային վերլուծության երկու մոտեցումներ՝ K-միջինների և աստիճանակարգային վերլուծությունների մեթոդները, որոնք ունեն բազմաթիվ տարատեսակներ: Աստիճանակարգային վերլուծությունում առավել հաճախ ենթադրվում է, որ ամեն դիտարկում սկզբնական պահին իրենից ներկայացնում է մի քլաստեր: Առաջին քայլում ամենամոտ քլաստերները միավորվում են, նախապես սահմանված մերձության ցուցանիշի հաշվարկի հիման վրա: Գոյություն ունի մերձության ցուցանիշների մեծ քանակություն: Հաջորդ քայլերում քլաստերների միավորման գործընթացը շարունակվում է այնքան,

մինչև արդյունքում ստացվում են երկու քլաստեր: Աստիճանակարգային վերլուծության ամեն քայլում քլաստերների քանակը փոքրանում է մեկով:

Աստիճանակարգային վերլուծությունը բավականին ժամանակատար է մեծ քանակությամբ դիտարկումների համար: Նման դեպքերում օգտագործում են K-միջինների քլաստերավորման ալգորիթմը: Վերջինիս թերությունը նրանում է, որ նախապես պետք է հայտարարվի քլաստերների քանակը: Այս մեթոդի առաջին քայլում կամայականորեն ընտրվում են K դիտարկումներ, որոնք համարվում են քլաստերների կենտրոններ: Հաջորդ քայլում քլաստերի կենտրոնը փոխվում է, եթե գտնվում է այնպիսի դիտարկում, որի հեռավորությունը տվյալ քլաստերից ավելի մեծ է, քան մոտակա քլաստերի միջև հեռավորությունը: Այս գործընթացը շարունակվում է մինչև քլաստերների կենտրոնների հեռավորության փոփոխությունների մեծությունը չնչին է դառնում [9]:

SPSS ծրագրային փաթեթում քլաստերավորման այս երկու մեթոդներն էլ իրացված են: Բացի այդ իրացված է նաև երկքայլ քլաստերային վերլուծության ալգորիթմը՝ հիմնված վերոնկարագրյալ երկու մեթոդների վրա: Արդյունքում հնարավոր է լինում վերլուծվող տվյալների համար գտնել քլաստերավորման լավագույն տարբերակը և պարզել գործոնների կարևորությունը [10]: Տվյալ աշխատանքում բոլոր հաշվարկներն իրականացվել են երկքայլ քլաստերային վերլուծության ալգորիթմի միջոցով:

Երկքայլ քլաստերային վերլուծությամբ երկրները բաժանվել են երեք քլաստերների: Նշված քլաստերավորման պարագայում մոդելի որակը լավն է, որի պարագայում դիտարկված երկրների կեսը խմբավորվել են մեկ քլաստերում, իսկ մնացած կեսը՝ հավասարապես բաշխվել են մյուս երկու քլաստերներում: Յուրաքանչյուր քլաստերին պատկանող երկրների ցանկն ամփոփված է աղյ. 2-ում:

Աղյուսակ 2. Քլաստերները և նրանց պատկանող երկրները, ըստ սահմանադրականության մակարդակի

Քլաստեր 1.	Քլաստեր 2.	Քլաստեր 3.

Միջին մակարդակ	Ցածր մակարդակ	Բարձր մակարդակ
Ալբանիա	Ադրբեջան	Չեխիա
Հայաստան	Բելառուս	Էստոնիա
Բուլղարիա	Ղազախստան	Լատվիա
Խորվաթիա	Ռուսաստան	Լիտվա
Վրաստան	Տաջիկստան	Լեհաստան
Հունգարիա	Թուրքմենստան	Սլովակիա
Ղրղզստան	Ուզբեկստան	Սլովենիա
Մակեդոնիա		
Մոլդովա		
Չեռնոգորիա		
Ռումինիա		
Սերբիա		
Ուկրաինա		
Բոսնիա և Հերցեգովինա		

Նշված քլաստերավորման համատեքստում ամենամեծ կարևորությունը ստացել են արտահայտման և համոզմունքների ազատության, ընտրական գործընթացի և իրավունքի գերակայության հայտանիշները: Դրանք ըստ կարևորության նվազման կարգի, ներկայացված են գծ. 3-ում:

Գծապատկեր 3. Հայտանիշների կարևորության մակարդակը



Դիսկրետ մոդելավորման իրականացումը պահանջում է որոշակի չափանիշի համաձայն բոլոր ցուցանիշներին բինար արժեքների (0 և 1) վերագրում: Որպես այդպիսի չափանիշ ընդունվել է քլաստերային միջինից մեծ (վերագրվում է 1 արժեքը) կամ փոքր լինելու փաստը (վերագրվում է 0 արժեքը): Ըստ այդմ՝ ձևավորվել է դիսկրետ մոդելավորման տվյալների հենքը: Առաջին քլաստերից հեռացվել են Ռումինիայի (համընկնում է Խորվաթիայի հետ) և Սերբիայի (համընկնում է Չեռնոգորիայի հետ), իսկ երկրորդից՝ Ադրբեջանի տողերը (համընկնում է Ռուսաստանի հետ)՝ այլ երկրների հետ համընկնումների պատճառով:

Որոշ եզրահանգումներ: Քլաստերային վերլուծության արդյունքում դիտարկված երկրների խումբը դասակարգվել է ցածր, միջին և բարձր մակարդակների, ըստ սահմանադրականության գնահատման առաջարկվող պայմանական ցուցչակազմի:

Հաջորդ քայլով փորձ է կատարվել սահմանադրականության մակարդակով որոշվող յուրաքանչյուր խմբի համար դիսկրետ մոդելավորմամբ [4, էջ 10-11] հաշվարկել հայտանիշների (աղյ. 1, Ա-ից

Ը) ազդեցության ուժը: Արդյունքում ստացվել է, որ սահմանադրականության ցածր մակարդակ ունեցող երկրների համար առավել կարևորվել են քաղաքացիական հասարակության կայացվածության և սոցիալական շերտավորման գործոնները: Սահմանադրականության միջին մակարդակ ունեցող երկրների համար հավասարապես կարևորվել են սեփականության իրավունքների, ընտրական գործընթացի, մարդկային զարգացման մակարդակի և սոցիալական շերտավորման գործոնները: Սահմանադրականության բարձր մակարդակ ունեցող երկրների համար առաջնային կարևորություն են ստացել քաղաքացիական հասարակության կայացվածության, կոռուպցիայի և արտահայտման ու համոզմունքների ազատության բնութագրերը: Պետք է նկատել, որ քաղաքացիական հասարակության կարևորությունն ինվարիանտ է քլաստերի բնույթից: Սահմանադրականության ցածր մակարդակ ունեցող երկրների շարքում ամենատիպական երկիրը Տաջիկստանն է, միջինների շարքում՝ Խորվաթիան, իսկ բարձրերի՝ Էստոնիան:

Հատկանշական է, որ երբ փոփոխվում է գնահատման ցուցչակազմը, մասնավորաբար հետևյալ կերպ՝ իրավական պետություն (իրավունքի գերակայություն, կոռուպցիա), ժողովրդավարություն (ընտրական գործընթաց, քաղաքական բազմակարծություն և մասնակցություն, արտահայտման և համոզմունքների ազատություն, ասոցացիոն և կազմակերպական իրավունքներ) և սոցիալ-տնտեսական չափում (մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ԳՀ), Ջինիի գործակից), ապա փոփոխվում են նաև արդյունքները: Սահմանադրականության ցածր մակարդակ ունեցող երկրների համար առավել կարևորվում են ընտրական գործընթացի, քաղաքական բազմակարծության և մասնակցության ու կոռուպցիայի մակարդակները: Մինչդեռ սահմանադրականության բարձր մակարդակ ունեցող երկրների համար նշված հայտանիշները ետին պլան են մղվում և առաջնային կարևորություն են ստանձնում իրավունքի գերակայությունը և սոցիալական շերտավորման կրճատումը:

Երկրների որոշակի հայտանիշների համախմբով ճանաչողության և դասակարգման խնդիրների լուծումը և դրանց

պատճառահետևանքային համակողմանի վերլուծությունը հիմք են հանդիսանում կառավարման հիմնախնդիրների առաջադրման ու լուծման համապատասխան կառուցակարգերի մշակման համար:

Գրականություն

1. ***Պարոնյան Հ.*** Երկեր, Սովետական գրող հրատ., Եր., 1979:
2. ***Հարությունյան Գ.*** Սահմանադրական մշտադիտարկում, Երևան, Նժար, 2016:
3. ***Арутюнян Г.Г.,*** Конституционализм: уроки, вызовы, гарантии, Киев, Логос. 2011.
4. ***Սարգսյան Հ., Տոնոյան Գ., Քոչինյան Ն.*** Դիսկրետ մոդելավորումը ճանաչողության և դասակարգման խնդիրներում: Եր., Զանգակ, 2015:
5. ***Սարգսյան Հ., Մխիթարյան Ժ.*** Երկրի սահմանադրականության մակարդակի գնահատումը դիսկրետ մոդելավորման և քլաստերային վերլուծության մեթոդներով // *Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի*, N.3 (39), 2015:
6. **Սարգսյան Հ., Մխիթարյան Ժ., Նահապետյան Ս.** Սահմանադրականության հարացույցը. տնտեսագիտական առումները, գնահատման հիմնահարցերը // *Բանբեր Երևանի համալսարանի. սոցիոլոգիա, տնտեսագիտություն,* N.2 (17), 2015:
7. **Саркисян Г., Мхитарян Ж., Нагапетян С.** Конституционализм в контексте конституционной экономики // *Актуальные проблемы экономической теории и практики*, Кубанский государственный университет, N.19, 2015.
8. **Մխիթարյան Ժ.** Սահմանադրականության գնահատման հայեցակարգային մոտեցումները // *Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի լրաբեր*, Հատ. 12, N.3, 2015:
9. **Сошникова Л.А.** и др., Многомерный статистический анализ в экономике, Москва, 1999.
10. The SPSS Two Step cluster component, Technical report, available at http://www-01.ibm.com/support/knowledgecenter/SSLVMB_21.0.0/com.ibm.spss.statistics.help/alg_twostep.htm.

Հրապարակման նպատակը դիսկրետ մոդելավորման որոշ օժանդակ եզրերի (ախտորոշող և ստուգող թեստեր), ինչպես նաև կլաստերային վերլուծության ու դրանց կիրառությունների

լուսաբանման միջոցով՝ առաջին մոտարկմամբ, պայմանական օրինակի վրա սահմանադրականություն ֆենոմենալ հասկացության գնահատման ուղենշումն է:

Բանալի բառեր. դիսկրետ մոդելավորում, քլաստերային վերլուծություն, սահմանադրականություն, թեստեր:

Целью публикации является оценка феноменального понятия “конституционализм” в первом приближении, на условном примере, посредством некоторых вспомогательных понятий дискретного моделирования (диагностические, а также проверяющие тесты) и кластерного анализа и освещения их применений.

Ключевые слова: дискретное моделирование, тесты, кластерный анализ, конституционализм.

The target of current issue is the assessment of the phenomenal concept of constitutionalism through presentation of some additional boundaries (diagnostics and verifying tests) of discrete modelling and cluster analysis, and their application coverage as the preliminary approximation based on the case study consideration.

Keywords: discrete modeling, tests, cluster analysis, constitutionalism.

Հայկ Լևոնի Սարգսյան, Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, sargsyan.ysu@gmail.com, 091412404

Ռուբեն Ալբերտի Գևորգյան, Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ, տնտեսագիտության դոկտոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, ruben_gevorgyan@yahoo.com, 091411724

Ժիրայր Սամվելի Մխիթարյան, Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ասպիրանտ, zhirayr.mkhitaryan@cba.am, 091749585